Հարցազրոյց Տք. Ռուբինա Փիրումեանի հետ

Տիկ. Փիրումեան, բարի եկած էք Արժանթին, ուր մասնակցեցաք *Յեղասպանութեան հետազօտողներու 9.րդ Միջազգային Հանդիպումին*:

Ահա մեզ հետաքրքրող հարցումները.

1. Ձեր վերջին Արժանթին այցելութենէն ասդին, որո՞նք կը նկատէք եղան Հայ Դատի հետապնդման ուղղուած Սփիւռքի եւ Հայրենիքի նոր ձեռքբերումները:
2. Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան ափի հայ գաղութները, ի՞նչ ձեռքբերումներ ունեցան եւ ի՞նչ մարտահրաւէրներ ունին դիմագրաւելու:
3. Ի՞նչ նոր ուսումնասիրութիւններ եւ գիրքեր պատրաստած էք վերջին տարիներու ընթացքին:
4. Ի՞նչպէս կրնաք բնորոշել, ամփոփ ձեւով եթէ կարելի է, Հայ Դատի ներկան եւ ապագան:
5. Ի՞նչ մտորումներով հայութիւնը պէտք է դիմաւորէ Ապրիլ 24.ի Հարիւրամեակը:
6. Ի՞նչ պատգամ կրնաք փոխանցել, կամ ինչ մտածում արտայայտել ուղղուած Հարաւային Ամերիկայի հայ գաղութներուն:

Խորին շնորհակալութեամբ,

Carlos Luis Hassassian

(Կարապետ Լեւոն Հասասեան)

«Արմենիա» թերթի լրագրող

Carlos Luis Hassassian

clhassassian@gmail.com

Հարցում թիւ 1

Իմ վերջին Արժանթին այցելութիւնից անցել են շուրջ 14 տարիներ եւ այդ ընթացքում ի հարկէ Հայ Դատի հետապնդման գծով տարուող աշխատանքների որոշ յառաջխաղացք կայ: Չէի ասի թէ մեծ է դա, քանի որ եթէ չափելու լինենք այն ճամբան որը մեր Դատի ամբողջական լուծման պիտի տանի, դեռ շատ ճամբայ ունենք կտրելիք: Ձեր հարցումը շատ ընդհանուր է եւ լայն ու ընդարձակ պատասխան է պահանջում: Փորձեմ պատասխանել շատ հպանցիկ եւ համառօտ:

Միջազգային ասպարէզում Հայ Դատի յանձնախմբերը եւ Սփիւռքում գործող այլ քաղաքական կազմակերպութիւններ շարունակեցին աշխատել թէ՛ իրենց ապրած երկրների իշխանութիւնների մօտ եւ թէ համաշխարհային կազմակերպութիւններում՝ ներքին եւ արտաքին իմաստով հայանպաստ որոշումներ ապահովել եւ Հայկական Հարցի նկատմամբ գիտակցութեան եւ բարի կամեցողութեան մակարդակը բարձրացնել: Սա շատ ընդհանուր բանաձեւումով: Որպէս օրինակ նշեմ մի քանի իրագործումներ: Կարեւոր եմ համարում Հայոց Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունող պետութիւնների թուի աւելացումը ինչպէս նաեւ զանազան երկրներում հայկական համայնքների աւելի աշխոյժ մասնակցութիւնը ազգային կեանքին եւ տուեալ երկրի քաղաքական գործունէութեանց մէջ:

Ներ-հայկական իմաստով, իմ կարծիքով բարձրացել է Սփիւռքում աճող սերնդի ազգային ու քաղաքական գիտակցութիւնը, որ դրսեւորւում է թէ՛ իրենց պատկան երկրներում տեղական քաղաքական ասպարէզում տարած հայանպաստ գործունէութեամբ եւ թէ Հայաստանի ու հայրենիքի հանդէպ պատկանելիութեան աւելի շեշտուած զգացումի մէջ: Այս վերջինը մեզ բերում է Հայաստանի դերակատարութեան հարցին: Պէտք է ընդունել, որ Հայաստանը իբրեւ ֆիզիքական էութիւն ու նաեւ վերջին տարիներին Սփիւռքի պատանիներին եւ երիտասարդներին զրաւելու մշակութային, կրթական եւ մարզական նախաձեռնութիւններով բաւական նպաստաւոր ներդրում է ունեցել այս բնագաւառում: Այս բոլորի մէջ ի հարկէ նկատի չեմ առնում հայութեան այն մեծ զանգուածը, որ կամայ թէ ակամայ ուծացման կամ աւելի մեղմ ասած անտարբերութեան ճամբան է բռնել: Իսկ Հայաստանում, ներքին իմաստով, որքան էլ որ նկատելի է ազգային գիտակցութեան եւ Հայ Դատի պահանջատիրութեան զգացումի զարգացումը նոր սերնդի մէջ, սակայն երկրի քաղաքական, տնտեսական եւ ընկերային աննպաստ իրավիճակը արգիլում է դրանց դրսեւորումը գործնական գետնի վրայ:

Հայ Դատի ասպարէզում վերջին տարիների ամենից թեժ նիւթը հայեւթուրք յարաբերութիւններն են: Այդ գծով, իմ կարծիքով, սփիւռքահայութեան միացեալ կամքը եւ սկզբունքայինութիւնը իրենց ազդեցութիւնը պարտադրեցին՝ Հայաստանի իշխանութեան վարչագիծը դէպի աւելի հայրենանպաստ ուղղութիւն տանելու եւ այդպէս ամրակայելու մէջ:

Հարցում 2

Տեղական եւ դաշնակցային (ֆեդերալ) իմաստով ամերիկահայութիւնը ցոյց է տուել, որ ինքը քաղաքական ուժ է եւ կարողացել է համակիրների մեծ թիւ ապահովել ԱՄՆ Քոնգրէսում: Արեւմտեան Ամերիկայում, տեղական կառավարման մարմիններում արդէն որոշ թիւ են կազմում հայերը եւ դա ունի իր ազդեցութիւնը հայ համայնքի ազգային խնդիրների լուծման եւ ընդհանրապէս Հայ Դատին ի նպաստ որոշումների մէջ: Սակայն այդ ներկայութիւնը կամ մասնակցութիւնը բաւարար չի եւ հայ համայնքի մարտահրաւէրներից մէկն է աւելի մեծ մասնակցութիւն ապահովել օրինակ՝ կրթական, ոստիկանական եւ ընդհանրապէս նահանգային ու քաղաքային տարբեր յանձնաժողովներում: Տեղական ձեռքբերումների մէջ կարեւոր է այն պարագան, որ պետական շատ միջնակարգ վարժարաններում Հայոց Ցեղասպանութիւնը տրւում է որպէս դասանիւթ եւ մաս է կազմում աւարտականի ընդհանուր քննութիւնների հարցումներին: Որոշ չափով ապահովուած է հայկական ներկայութիւնը տեղական մամուլի եւ այլ լրատուական աղբիւրներում, սակայն դա էլ բաւարար չի: Անժխտելի են բացասական երեւոյթներ, մանաւանդ՝ Լոս Անջելըսում, որոշ, կամ կարելի է ասել մեծ թւով հայերի կողմից թոյլ տրուած, անբարոյականութիւն, գողութիւն, մարդասպանութիւն եւ այլ յանցաւոր կեցուածքներ, որոնք էապէս նուաստացնում են հայ համայնքի արժէքն ու գործած տպաւորութիւնը (*իմէջ*):

Շեշտուած գործունէութիւն է ծաւալուել իրաւաբանական միջամտութիւններով տեղական եւ դաշնակցային մակարդակի վրայ Ցեղասպանութեան վերապրողների համար նիւթական հատուցումներ ապահովելու: Նաեւ աշխատանք է տարւում ԱՄՆ Քոնգրեսում քննարկման դնելու մի բանաձեւ, որով Թուրքիոյ իշխանութիւններին կը թելադրուի տարածքում գոյութիւն ունեցող հայոց եկեղեցիները, աւերուած կամ կանգուն, հայութեան յանձնելու:

Արեւմտեան ափերում, կամ ամբողջ Հիւսիսային Ամերիկայում, մեծ մարտահրաւէր է նոր սերնդի հայեցի դաստիարակաութիւնը: Հայ աշակերտների մի շատ չնչին տոկոսն է հայկական ամէնօրեայ դպրոցներ յաճախում, մի չնչին տոկոս էլ՝ շաբաթօրեայ դպրոցներ: Այդ դպրոցները այսօրուայ պայմաններում իրենց առաքելութիւնը լիովին չեն կարողանում կատարել՝ ո՛չ հայկականութեան փոխանցման եւ ամրակայման եւ ոչ էլ հայերէնագիտութեան իմաստով: Երեւի թէ վերանայման պիտի ենթարկուի ազգային կրթութեան ու դաստիարակութեան փոխանցման քաղաքականութիւնն ու ռազմավարութիւնը:

Համայնքի ղեկավարութիւնը մեծ դժուարութիւն ունի ներգրաւելու եւ իր կառոյցների մէջ պահելու աներեւակայելի չափերի հասած հայ գաղութը, որ արդիւնք է Հայաստանից արտագաղթի եւ Միջին Արեւելքի երկրներից շարունակուող արտահոսքի: Արդիւնքում՝ աճել է ձուլման թափը եւ տեղական տգեղ ու անբարոյ կենցաղն ու ընթացքը ընդօրինակող զանգուածի թիւը:

Հարցում 3

Ինչպէս գիտէք, վերջին տարիներում, ազգային, հասարակական, եւ գիտական աշխատանքս նուիրել եմ Հայոց Ցեղասպանութեան ասպարէզին, այլ խօսքով՝ այդտեղ եմ տեսնում իմ կեանքի նպատակն ու առաքելութիւնը:

Այդ գծով, նախ կարեւոր եմ համարում Հայոց Ցեղասպանութեան դասաւանդումը հայ սերունդներին՝ որպէս պատմական իրողութիւն, որպէս դեռ հատուցման սպասող անարդարութիւն, որպէս մարդկային իրաւունքների ծայրագոյն խախտում, որ իր դատաստանին է սպասում, որպէս մեր ազգային նկարագրի եւ ինքնութեան մէկ տարր, եւ, եւ, եւ... Այդ առումով, բացի Հայ Դատի դասագրքերից որ կազմեցի հայոց միջնակարգ (երկրորդական) դպրոցների 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանների համար եւ «Հայկական հարցի պատմութիւն» դասագիրքը, որ պատրաստեցի իբրեւ օժանդակ ձեռնարկ Հայաստանի 9-10 դասարանների համար, նախաձեռնեցի պատրաստութիւնը նաեւ մի ծրագրի, որ նպատակադրում է Հայոց Ցեղասպանութեան մասին դասաւանդել բոլոր տարիքի աշակերտներին, առաջին դասարանից մինչեւ 12-րդ: Դա պիտի լինի իւրաքանչիւր տարիքի համապատասխանող նիւթերով, միջոցներով եւ մեթոդական ուղեցոյցով: Այս ծրագրի իրագործումը հնարաւոր դարձաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Վարժարանների Խնամակալ Մարմնի աջակցութեամբ, որի նախագահն էի այդ ժամանակ, եւ մասնագէտ մանկավարժներից կազմուած յանձնախմբի բերած օգնութեան: Անցեալ տարի նախագիծը ընդունուեց նաեւ Հ.Հ. Գիտութեան եւ Կրթութեան Նախարարութեան կողմից եւ ինձ պարտականութիւն տրուեց ամբողջացնել եւ առ ցանց ձեռնարկի համար պատրաստել այն: Ծրագիրը պատրաստ է այսօր եւ Հայաստանում գործող «Զանգակ» հրատարակչականի միջոցով այն դրուած է www.spyurq.dasagirq.am կայքէջի վրայ ամենուրեք, բոլոր ցանկացողների համար ծրիաբար օգտագործելու դիւրութեամբ:

Ակադեմական ասպարէզում, շարունակում եմ ուսումնասիրութիւններս Հայոց Ցեղասպանութեան գրականութեան մէջ: 2008-ի Ապրիլին լոյս ընծայեցի And Those who Continued Living in Turkey after 1915, The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature: Յուսամ շուտով լոյս պիտի ընծայեմ մէկ այլ հատոր դարձեալ անգլերէնով, որ պիտի վերլուծի Հայոց Ցեղասպանութեան ազդումը սփիւռքահայ երկրորդ եւ երրորդ սերնդի կողմից ստեղծագործուած գրականութեան վրայ: Բացի այս հրատարակութիւններից փորձում եմ տարին մի քանի գիտական ուսումնասիրութիւններով երեւան գալ գիտական պարբերաթերթերում եւ միջազգային համագումարներում: Ներկայիս, ինչպէս գիտէք, Բուէնոս Այրեսում մասնակցում եմ Ցեղասպանագէտների Միջազգային Կազմակերպութեան հերթական համագումարին:

Հարցում 4

Այս մէկը զանց առէք: Շատ ընդհանուր է:

Հարցում 5

Մօտենում է Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակը եւ զգալի է որոշ աշխուժութիւն՝ աւելի շեշտուածութեամբ եւ ծրագրուածութեամբ դիմաւորելու այն: Առիթը, իմ կարծիքով սակայն, պիտի խթան լինի ուժգնացնելու համար համահայկական մեր քաղաքական պայքարը՝ Հայոց Ցեղասպանութեան համաշխարհային ճանաչման հասնելու եւ մեր դատի լուծմանը մի քայլ մօտենալու համար: Եւ ինձ համար դա է կարեւորը: Վստահաբար կլինեն բարձր

մակարդակի գիտաժողովներ եւ միջոցառումներ. բայց աւելի կարեւոր է քաղաքական պայքարը՝ կարենալ հայ-թրքական յարաբերութիւնները վերջապէս հայանպաստ հունի մէջ դնել՝ հնարաւոր դարձնելու պատմական իրողութեան ճանաչումը, քաղաքական ու սահմանային վէճերի կարգաւորումը եւ վերջապէս, ղարաբաղեան հարցի լուծումը: Սա գուցէ գերմարդկային ճիգ է պահանջում, բայց Սփիւռքի քաղաքական պայքարը Հայաստանի Հանրապետութեան մի երազ պետականութեան վճռական քայլերին զուգորդելով, ոչինչ անկարելի չի:

Հարցում 6

Խորապէս տպաւորուած եմ ներկայ պայմաններում եւ տեղական մշակոյթի ամենակուլ մթնոլորտում Բուէնոս Այրեսի հայկական կազմակերպութիւնների կատարած աշխատանքներով, այն ինչ որ հասցրեցի տեսնել: Կարծում եմ նախորդների ձեռք ձգած փորձն ու տեւականօրէն պայքարի ճամբայ որոնելու հրամայականը այսօրուայ ղեկավարութեան առջեւ դրել է ամենահաւանական ճամբան եւ նպատակին հասնելու միջոցները: Մնում է մաղթել անկոտրում կամք եւ յարատեւ աշխատանք թէ՛ սերունդների դաստիարակման եւ քաղաքականացման գործում, թէ՛ հայրենիքի հետ կապի եւ նրա ընձեռած հնարաւորութիւններից օգտուելու, եւ թէ Հարաւ Ամերիկեան այս ռազմավարական իմաստով կարեւոր երկրում կշիռ դառնալու մէջ: Իսկ երիտասարդ սերնդին, եթէ կարդում կամ լսում են պատգամս, պիտի մաղթեմ, որ իրենց անհատական յաջողութիւնների կողքին պահեն իրենց ազգային գիտակցութիւնը, որ զգացում չի որ կարող է դիւրութեամբ մարել, այլ ուժ է ու հպարտութիւն, որ կծնի քո արմատների, քո ազգային արժէքների պրպտումով եւ կը դառնայ խարիսխը քո ինքնավստահութեան՝ առաջանալու կեանքում, աշխարհի որ ծայրում էլ որ գտնուելու լինես: